ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
"MKHITAR SEBASTATSI" EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064,Երևան.Ա.Բաբաջանյան 25 հեռ:74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

12-10-314 04.10.2012թ.

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Ս. ԱՍՐՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Արցախի ԿԳՆ պատվիրակությունը բարեխիղճ և լիարժեք մասնակցեց ՀՀ ԿԳՆ պատվերով կրթահամալիրում իրականացվող մեր հեղինակային կրթական ծրագրի աշնանային ամենամյա 7-րդ հավաքի աշխատանքին: Մեզ համար կարևոր էր, որ հնարավորություն ունեցանք մեր արցախյան գործընկերներին ներկայացնելու հեղինակային կրթական ծրագրի կազմակերպումը: Իսկ դրա տեղայնացման, Արցախում մեր փորձի տարածման աշխատանքը մեր համատեղ հետագա անելիքն է: Պատրաստակամ սպասում ենք Ձեր առաջարկներին:

Զարգացնելով մեր կրթական համագործակցությունը, արդեն ձեռքբերված պայմանավորվածության համաձայն ներկայացնում ենք Վանք գյուղում, նրա դպրոցում և «Գանձասար» ճամբարում հոկտեմբերյան համատեղ ստեղծագործական հավաքի ծրագրի նախագիծը: Խնդրում ենք Ձեր լրացումներով հաստատել այն:

Անցկացման ժամկետը՝ 23-27 հոկտեմբերի:

Կրթահամալիրից կմասնակցի 50 մարդ՝ նախասիրությունների զարգացման պատանեկան ակումբների 40 սովորող և տասը ղեկավար.

- էկոլոգ-հայրենագետների ակումբ
- Ասպետների ակումբ
- Գիտակների «Ապոլլոն» ակումբ
- «Տիեզերք» ակումբ
- «Ռոբոտիքս» ակումբ
- «Խաղարկային դատարան» ակումբ
- «Լուսաստղ» պատանեկան ամսագրի խմբագրություն
- info.mskh ակումբ
- Բանավեճի ակումբ
- Անգլիախոսների ակումբ

Առաջարկում ենք, որ Արցախից ևս լինեն 50 մասնակիցներ՝ 10 ուսուցիչ և 40 սովորող՝

- Վանք գյուղից և հարակից բնակավայրերից, առանց գիշերելու, 25 մասնակից,
- գիշերակացով 25 մասնակից՝ 15 մարդ Ստեփանակերտի թ. 9 ավագ դպրոցից, 5-ական՝ Ասկերանի և Շուշիի ավագ դպրոցներից:

Անհրաժեշտ թվային միջոցները, որոնք չկան ճամբարում և Վանքի դպրոցում, կբերենք մեզ հետ: «Տիեզերք» ակումբը կլինի իր շարժական աստղացուցարանով, աստղադիտակով: Աստղացուցարանը կտեղադրվի Վանք գյուղի դպրոցում, և 1-ին դասարանից սկսած՝ բոլոր սովորողները հնարավորություն կունենան մասնակցելու ֆիլմերի դիտումներին: Իսկ աստղադիտարանը կտեղադրվի ճամբարում՝ հնարավորություն տալով գիշերային դիտումներ կազմակերպելու:

Ներակումբային քննարկումներից բացի, նախատեսվում են «Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն», «Արցախի «Ասպետ» ճամբարը, որպես ռազմամարզական ակումբի կայացման մոդել» թեմաներով ընդհանուր քննարկումներ: Նախատեսվում են նաև ակումբների միացյալ պարապմունքներ՝

- Խաղարկային դատարան
- Գիտակների մրցույթ
- Բանավեճ
- Հայրենագիտական-էկոլոգիական արշավ
- Պարուսուցում և կարաոկե

Կրթահամալիրի ներկայացուցիչները հոկտեմբերի 20-ին կլինեն Ստեփանակերտում, Վանքում, Ձեր ներկայացուցիչների հետ տեխնիկապես, բովանդակային կնախապատրաստեն հավաքի կազմակերպումը, մասնակիցների կենցաղը:

Մասնակիցների սննդի և ուսուցման ծախսերը հոգում ենք մենք: Խնդրում ենք ապահովել 75 մասնակցի կեցության ծախսերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ***

Կապարող՝ Ս.Մարկոսյան
Հեռ. 010 74 72 46

info@mskh.am